ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ ԵՎ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Ժ.

Ռուսաստանում Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ հետաքրքրությունը գալիս է անցյալից և գրեթե մեկ տասնյակի հասնող դարերի պատմություն ունի: Սկզբնական շրջանում երկու ժողովուրդների առնչություններն արտահայտվում էին առևտրատնտեսական կապերի տեսքով, և միայն 1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագրով զարգացման նոր հեռանկարներ բացվեցին Ռուսաստանի հայ գաղթօջախների համար: Դրանից հետո արդեն մոսկովյան հզոր պետության հետ հայերին կապում էին ոչ միայն առևտրատնտեսական, այլև՝ քաղաքական իրական շահերն ու հեռանկարները: Հետզհետե Ռուսաստանն ավելի է քաշվում հակաթուրքական պայքարի մեջ, թեպետ տեղի ժողովուրդների ազատագրության նպատակին զուգահեռ, ռուսական պետությունը առավել քան շահագրգռված էր սեփական երկրի հարավային ու արևմտյան սահմանների պաշտպանությամբ:

Բաժանված լինելով իր երկու հարևանների՝ Պարսկաստանի ու Թուրքիայի միջև, հայ ժողովուրդը դարեր շարունակ կենաց ու մահու պայքար է մղել ազատության ու անկախության համար: Սակայն որքան էլ վճռական ու հաստատակամ լիներ թուրք-պարսկական լծի դեմ մղված պայքարում, այդուհանդերձ, նա քաջ գիտակցում էր, որ սեփական ուժերով անհնար է իրականացնել երկրի ազատագրումը: Ուստի, ակնհայտ է, որ այդ ազատագրումը հնարավոր էր միմիայն դրսի, այն էլ հզոր պետության ռազմական աջակցության միջոցով: Եվ ողջ XVII և XVIII դարերի հայ ազատագրական շարժումն ընթացավ այդ ուժի փնտրտուքների մեջ. սկզբում որպես խնդրի իրականացման աջակիցներ դիտվում էին արևմտաեվրոպական երկրները: Արևմտյան Եվրոպայի զորեղ պետություններից օգնություն ստանալու հայ հոգևոր ու քաղաքական գործիչների բազում ակնկալիքներն ու դիմումներն այդպես էլ մնացին անպատասխան. գործը խոստումներից ու քաջալերող խոսքերից այն կողմ չէր անցնում: Ուստի, եթե հայ գործիչների կապերը Արևմտյան Եվրոպայի առանձին պետությունների ու Հռոմի հետ ձախողված փորձեր էին միայն, ապա Ռուսաստանի օգնությունն իրական էր և թելադրված էր ինչպես տարածաշրջանային, այնպես էլ հայ ժողովրդի առջև ծառացած ազգային-ազատագրական խնդիրներով: Ռուսաստանի օգնությամբ ազատագրության մտքին հանգեցին հայ առաջադեմ շատ գործիչներ՝ Իսրայել Օրին, Դավիթ Բեկը, Հովսեփ Արղությանը, Հովհաննես Լազարյանը, Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը և մյուսները: Հայ ժողովրդի մեջ ձևավորվեց Հայաստանի ազտագրության ռուսական կողմնորոշումը, ռուսներն էլ քաջ գիտակցում էին, որ արևելյան շուկաներ դուրս

գալու և Հարավային Կովկասում ամրապնդվելու համար իրենց լավագույն դաշնակիցները հայերն էին. այլ խոսքով՝ Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերը համընկնում էին հայ ժողովրդի ազգային-ազատագրական ձգտումներին:

XVIII դ. սկզբին Ռուսաստանի արտաքին քաղաքական տեսադաշտում հայտնվեց Անդրկովկասն իր բարդ ու դրամատիկ իրավիճակով: Ռուսական արքունիքում առաջ եկավ արևելյան խնդիրը: Բնականաբար, խնդիրները լուծելու համար ռուսական պետությունը մեծ նշանակություն էր տալիս տեղի ժողովուրդների հետ կապերի հետագա խորացմանն ու զարգացմանը: Այդ առնչությամբ առանձնանում է հատկապես Պետրոս Մեծի ժամանակաշրջանը. ռուս նշանավոր միապետի պետական, դիվանագիտական ու ռազմական բուռն գործունեության ընթացքում երկրամասի մասին հավաքված բազմաթիվ փաստերն ու տեղեկությունները, առաջին հերթին, ծառայելու էին հզորացման ուղին բռնած Ռուսաստանի արտաքին քաղաքական նպատակներին. « Արևելքի գիտական ուսումնասիրության հարցում առաջամարտիկը Պետրոս Մեծն էր,- գրում էր « Ռուսսկի վեստնիկ» ամսագիրը:- Անդրկովկաս և Պարսկաստան ձեռնարկած նրա արշավանքները, միաժամանակ, նոր նյութերի հիմք ծառայեցին գիտության համար: Կայսեր անձնական հետաքրքրասիրության և, ընդհանրապես, գիտելիքի հանդեպ ունեցած նրա հարգանքի շնորհիվ դրանք ջանադրաբար պահպանվեցին... Պետրոսի անմիջական հրամանով վոլգյան բուլղարների նախկին մայրաքաղաքում գտնվող արաբական, հայկական և թաթարական արձանագրությունները թարգմանվեցին ռուսերեն. դա, թերևս, առաջին արևելագիտական աշխատությունն էր Ռուսաստանում»[1]: Անդրկովկասի և Հայաստանի հետ ծանոթությունը Պետրոս Առաջինի օրոք հասավ պետական քաղաքականության աստիճանի:

XIX դ. սկզբին Հայաստանը կրկին հայտնվեց Ռուսաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ ծրագրերում: Ռուսաստանի համար պակաս կարևոր չէր նաև Հայաստանի մասին հասարակական կարծիքի ձևավորումը: Դրան մեծապես նպաստեցին Ռուսաստանում արդեն հրատարակված հայագիտական բնույթի աշխատությունները: Այսպես, հայոց պատմությանը նվիրած գործերից մեկում, որն, ի դեպ, լույս է տեսել Հովհաննես Լազարյանի հովանավորությամբ, ռուս հեղինակ Սերգեյ Գլինկան այսպիսի ուշագրավ միտք է արտահայտել. «…շատ ժողովուրդներ, ընդունելով օտարի գերիշխանությունը, իրենք էլ նրանց հետ օտարացան: Սակայն եղան ժողովուրդներ, որոնք դարերի ընթացքում պահպանեցին ոչ միայն իրենց անունը, այլև իրենց բարոյական կերպարը, լեզուն և հավատը: Այդ ժողովուրդների շարքում հայերը գրավում են առաջնակարգ տեղ: Անտեսելով Ասիայում կատարված իրադարձությունները, որոնք ավելի քան երեք հազարամյակ բուռն կերպով ալեկոծում էին Հայաստանը, հայերն այդպես էլ մնացին հայեր»[2]: Իսկ

---

[1] *Русский вестник, т. 2, кн. 2, 1856, с. 119.*

[2] Глинка С. Н. *Обозрение истории армянского народа, ч. 1, М.,1832, с. 2.*

ռուս հեղինակ Ա. Գրենը, իր հայրենակիցներին հիշեցնելով, թե ինչպիսի արհավիրքների է դիմակայել հայ ժողովուրդը, գրում է. « Իր բազմադարյան պատմության մեջ հայ ժողովուրդը մշտապես աչքի է ընկել համառ ու անկախատենչ բնութագրով: Հուսով եմ, որ այն առավել, քան կիետաքրքրի ռուս ընթերցողներին և շատերին հնարավորություն կտա դատելու, թե որն է հայ ազգի յուրահատկությունը և նրան կազատի ամեն տեսակ մեղադրանքներից ու կշտամբանքներից, որոնք վերջերս այդքան հաճախակի են դարձել ռուս հասարակության շրջանում»[3]:

Հայ-ռուսական պատմական կապերի հետագա խորացումն ունեցավ իր տրամաբանական ավարտը. XIX դ. առաջին երեսնամյակի կովկասյան պատերազմների հետևանքով պատմական Հայաստանի մի հատվածը միացվեց ռուսական կայսրությանը: Ռուսաստանը սկսեց վճռական դեր խաղալ հայ ժողովրդի ճակատագրում: Այս իմաստով, Ռուսաստանի հետ կապերի հետագա ամրապնդումը պետք է դիտել որպես երկու ժողովուրդների՝ քաղաքական ընդհանուր շահերի արտահայտություն: Այս ճշմարտությունը հաստատում է XIX դարում հայ-ռուսական ռազմական համագործակցությունը, երբ Ռուսաստանը մի քանի պատերազմներ վարեց, սկզբում Պարսկաստանի, այնուհետև Թուրքիայի դեմ: Ուստի, հարկ է հստակ սահմանազատել ռուսական արքունիքի գաղութային քաղաքականությունը և հայ ժողովրդի համազգային շահերը, այլապես անհասկանալի և անբացատրելի կլինի Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու ակտի նշանակությունը:

Առաջին. հայ ժողովրդի մի հատվածն ազատվեց իր հարևանների մեջ տարրալուծվելու վտանգից, քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծվեցին ազգահավաքման, տնտեսության ու մշակույթի զարգացման համար: Դա անժխտելի իրողություն է և արդեն պատմություն: Ռուսաստանի ռազմական հաղթանակների շնորհիվ Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից հայ ժողովրդի համար ունեցավ առաջադիմական նշանակություն:

Երկրորդ. թեպետ ցարիզմը նվաճված ժողովուրդների նկատմամբ վարում էր գաղութային քաղաքականություն, այդուհանդերձ, Ռուսաստանին միանալուց հետո Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքը զգալի աշխուժացում ապրեց, ինչը հնարավոր չէր Պարսկաստանի ու Թուրքիայի դարավոր բիրտ, ապա և վերջինիս կողմից հետագայում որդեգրած հայաջինջ քաղաքականության հետևանքով: Այդ ամենով հանդերձ, Ռուսաստանը չարդարացրեց հայ ժողովրդի ազատագրական հույսերը: Այսպես, եթե XVIII դ. հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները զարգանում էին Ռուսաստանի ռազմական օգնությամբ Հայաստանի ազատագրության ու ռուսական պետության հովանավորությամբ հայկական պետականության վերականգնման միտումներով, ապա XIX դ. սկզբին արդեն ցարիզմի կողմից առաջ քաշվեց Արևելյան Հայաստանի միացման, իրականում՝ նվաճման հարցը: Բացի այդ,

[3] Кавказ, 1896, N 27, с. 114.

հայ ժողովրդի մի հատվածը, միանալով Ռուսաստանին, չստացավ ազգային, սոցիալական ու քաղաքական ազատագրություն: Ցարիզմը ռուսական կայսրության կազմի մեջ մտած ժողովուրդների, այդ թվում՝ հայերի նկատմամբ վարել է գաղութային քաղաքականություն, քիչ չեն եղել դեպքերը, երբ հետապնդվել են ազգային մշակույթը, լեզուն և սովորույթները: Իհարկե, այս ճանապարհը մեզ համար իդեալական չէր, սակայն, մյուս կողմից, փրկության միակ ելքն էր: Այլ խոսքով՝ պատմական այդ կոնկրետ պայմաններում, երբ հայ ժողովուրդը, բառի բուն իմաստով, երկատված էր Պարսկաստանի և Թուրքիայի միջև, նրա պատմական զարգացումը օբյեկտիվորեն համընկնում էր Ռուսաստանի արտաքին քաղաքական շահերին: Ուստի, հարցի հակասական, ինչ-որ տեղ նույնիսկ իրարամերժ այս նշանակությունների միայն հստակ սահմանազատումով կարելի է գնահատել Արևելյան Հայաստանի միացման (նվաճման) ու դրա հետևանքների անաչառ գնահատումն ու արժեքավորումը:

Երրորդ. անտարակույս, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու շնորհիվ հայության մի հատվածը փրկվեց տարրալուծվելու վերահաս վտանգից: Գաղտնիք չէ նաև, որ միացման նախօրյակին Արևելյան Հայաստանում պատմական մի շարք իրադարձությունների հետևանքով տեղի հայությունը քանակական տեսակետից մեծամասնություն չէր կազմում, ինչը ժողովրդագրական լուրջ սպառնալիք էր: 1828 թ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո 150 հազարի հասնող հայեր Պարսկաստանից և Թուրքիայից բնակություն հաստատեցին Արևելյան Հայաստանում, և որոշակիորեն ստվարացավ հայկական տարրը բուն հայրենիքում. դա, անշուշտ, անվիճելի և դրական արդյունք պետք է համարել: Կարևոր է նաև ներգաղթած հայության ներդրումը Արևելյան Հայաստանի տնտեսական, հոգևոր ու քաղաքական կյանքի աշխուժացման, նաև զարգացման գործում: Ճիշտ է, մեր պատմագիտության մեջ ինչ-որ տեղ, հասկանալի պատճառներով, պարսկական տիրապետությանը վերաբերող ժողովրդագրական տվյալները առանձնակի չեն ընդգծվում, սակայն փաստ է, որ Արևելյան Հայաստանի ժողովրդագրական շատ խեղումներ հենց պարսիկ խաների ձեռնարկած բռնագաղթերի հետևանքն էին: Այսպես, Ռուսաստանի հետ միանալու նախօրյակին, 1827 թ., Արևելյան Հայաստանում հայերի թիվը կազմում էր բնակչության մեկ երրորդ մասը՝ 25.151 մարդ, իսկ արդեն երեք տարի անց՝ 1831 թ., այն հասավ 82.377-ի[4]: Հետագա տարիներին հայ բնակչության աճը ավելի զգալի էր, և, իրոք, Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգահավաքման օջախ: Իսկ եթե նկատի ունենանք, թե ինչ ճակատագրի արժանացավ հայության արևմտյան հատվածը, ապա ավելի հստակ կդառնա միացման նշանակությունը: «…Մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո վերջնականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց Հին Սյունիքը, Գուգարքն ու Արա-

[4] *Տե՛ս* Երիցյան Ալ., *Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 337-338:*

բատյան երկիրը և միանգամ մեկընդմիշտ վերջ տրվեց կոտորածներով, գաղթականներով ու առևանգումներով հայտնի հայկական հարցին հայոց աշխարքի էս մասում, կամ ուրիշ խոսքով՝ պարսկահայկական հարցին»[5],- գրել է մեծն Հ. Թումանյանը:

Չորրորդ. չպետք է մոռանալ նաև այ հանգամանքը, որ, ի տարբերություն Պարսկաստանի և Թուրքիայի, Ռուսաստանում ավելի արագ ընթացան սոցիալ-տնտեսական փոփոխությունները, որոնք որոշակի դրական ազդեցություն ունեցան նաև Հայաստանի տնտեսության զարգացման վրա: Ուրեմն, այս տեսակետից ևս Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին կարևոր նշանակություն ուներ. Հայաստանի տնտեսությունը ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում նկատելիորեն զարգացավ, ինչը չի եղել պարսկական մի քանի հարյուրամյա տիրապետության պայմաններում:

Հինգերորդ. հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը աննախադեպ առաջընթաց ունեցավ: Ավելորդ է նշել, որ Պարսկաստանը, հեռու մնալով համաշխարհային մշակութային զարգացումներից, բնականաբար, պետք է կաշկանդեր նաև հայ ժողովրդի զարգացման հնարավորությունները: Ուստի, մշակութային ավանդույթներ ունեցող ռուսական մշակույթի հետ շփումը բարերար ազդեցություն ունեցավ ողջ հայկական մշակույթի զարգացման գործում: Իզուր չէ, որ XIX դարը համարվում է հայ մշակույթի վերելքի ժամանակաշրջան: Մոսկվան, Պետերբուրգը, Թիֆլիսը, Կազանը, Աստրախանը, Նոր Նախիջևանը և այլ քաղաքներ դարձան հայ մշակույթի նշանավոր կենտրոններ: Հիմնվեցին դպրոցներ, որոնք ավելի, քան մեկ դար լուսավորական օջախներ էին ռուսահայության և աշխարհասփյուռ հայության համար. 1810 թ. Աստրախանում բացվեց Աղաբաբյան դպրոցը, 1815 թ. Մոսկվայում՝ հռչակավոր Լազարյան ճեմարանը, 1824 թ. Թիֆլիսում՝ Ներսիսյան նշանավոր դպրոցը, 1837 և 1838 թթ. թեմական դպրոցներ են բացվում Երևանում և Շուշիում: Գնալով ավելանում է Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում սովորող հայ ուսանողների թիվը: Ավելին, այդ կրթօջախներից շատերը դարձան հայագիտական խոշոր կենտրոններ և նշանակալից դեր խաղացին հայ պատմագիտության զարգացման գործում: Մեծ վերելք ապրեց նաև հայ գիտական միտքը. արդեն 1809 թ. ռուսերեն թարգմանվեց և հրատարակվեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որին հաջորդեցին նաև մյուս պատմիչների աշխատությունների հրատարակությունները: Դրանք, որպես կանոն, սկսվում էին ընդարձակ առաջաբաններով, որոնք ռուս ընթերցողին էին հասցնում ոչ միայն հայ պատմիչի գործի արժեքը, այլև մեկնաբանում էին տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունները: Ավելորդ չէ նշել նաև, որ, տարածաշրջանի երկրների համեմատությամբ, ամենից ուսումնասիրվածն ու հարուստը հայագիտական գրականությունն էր: 1890 թ. «Կավկազսկի կալենդար» հանդեսը խոստովանում էր. «Կովկասագիտական հետազոտությունների առումով ամենից խորն ուսումնա-

---

[5] **Թումանյան Հ.,** *Երկեր, հ. 4, Ե., 1951, էջ 228:*

սիրված է հայոց պատմությունը: Հայ պատմագիտական գրականությունը նաև ամենից հարուստն է: Հայերն ունեն մեծ թվով նշանավոր պատմիչներ, որոնց գործերն արդեն թարգմանված են ռուսերեն և եվրոպական լեզուներով»[6]:

Իր հերթին, Ռուսաստանը անթաքույց հետաքրքրություն էր ցուցաբերում կայսրությանը միացված հայկական մարզերի քաղաքական ու տնտեսական օգտավետության հարցերում: Ռուսական արքունիքում քաջ գիտակցում էին, որ այդ առումով հայերը տարածաշրջանում ուղղակի չունեին մրցակիցներ: Ռուս հետազոտողներից Ս. Գլինկան, օրինակ, արևելահայերի գաղթին նվիրված իր աշխատությունում, քննելով գաղթի արդյունքները, առաջին հերթին ընդգծում էր Ռուսաստանի հարավային սահմանների ամրապնդման իրողությունը: « Ակնկալվող օգուտը մշտապես զգալի և ակնհայտ կլինի,- գրում է նա,- առավել ևս, որ Ռուսաստանի սահմանագլխին քրիստոնյա ժողովրդի բազմապատկվելը կօգնի հուսալի պատնեշ ստեղծելու սահմանակից երկրների անբարյացակամ գործողությունների հանդեպ, հատկապես Թուրքիայի ու լեռնականների դեմ պայքարում: Ռուսաստանը, զարկ տալով իր այս նոր ձեռնարկմանը, բավականին օգուտներ կարող է քաղել այդ հողերի բնակեցումից»[7]: Մեկ այլ տեղ ռուս հեղինակը, ընդգծելով արևելյան առևտուրը հայերի միջոցով զարգացնելու ռուսական կառավարության հետաքրքրությունը, ոչ երկիմաստ գրում է. « Հայերի նախաձեռնողականությունը և գործարարությունը կաշխուժացնեն ասիական առևտուրը և Ռուսաստանի հարստության կարևոր աղբյուր կդառնան»[8]: Ի դեպ, պարսկահայերի՝ ռուսական տարածքներ գաղթեցնելու ծրագրի մտահղացումը գալիս է դեռևս Պետրոս Մեծից. ռուս տիրակալը նպատակ ուներ Ռուսաստանին միացնել մերձկասպյան մարզերը և քաջ գիտակցում էր, որ « այդ երկրների մուսուլմանական բնակչությունը չի համագործակցի իրենց հետ»[9], ուստի, այդ խնդրում լավագույն միջոցը նա համարում էր այդ մարզերում քրիստոնեական բնակչության ուժեղացումը և «ուղղակիորեն մատնացույց էր անում հայերին. բոլոր միջոցներով ձգտել հայերին հրավիրել բնակվելու ռուսական զորքերի գրաված տարածքներում… և այլ հարմար վայրերում. նրանց սիրալիր ընդունել և վերաբերվել բարյացակամ, պաշտպանել նրանց՝ տրամադրելով բնակության համար հարմար վայրեր և հողատարածքներ»[10]: Ռուս նշանավոր հրապարակախոս Ա. Գերյեն գրում է. «Տվեք այդ ժողովրդին գործելու ազատություն, օգնեք նրան բարոյապես ու հոգեպես բարձրանալու, և բոլորը կզարմանան այդ զարգացումից...»[11]: Իսկ այն հարցին, թե ով կարող

---

[6] *Кавказский календарь, 1890, с. 32.*

[7] **Глинка С. Н.** *Описание переселения армян аддербиджанских в пределы России, М.,1831, с. 93.*

[8] *Նույն տեղում, էջ 95:*

[9] **Эзов Г.** *Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, с. LXXIII.*

[10] *Նույն տեղում:*

[11] *Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898, с. 240.*

է աջակից լինել հայերին, հեղինակի պատասխանը միանշանակ է՝ վճռական խոսքը պատկանում է Ռուսաստանին: «Երկրի իրական շահերի տեսակետից,- գրում է նա,- ամենից առաջ պետք է ընդունել, որ ուղղակի անիրագործելի է այդչափ կենդանի ու պատմությամբ դրոշմված ազգին, ինչպիսին հայոց ազգն է, ուրիշ դարձնելը: Յուրաքանչյուր իրական քաղաքականություն պետք է հաշվի նստի հայ ժողովրդի՝ որպես կայացած ազգի փաստի հետ: Հայերը կդառնան ամենից նվիրյալ ու օգտակար ժողովուրդն աշխարհում, եթե ռուսները համագործակցեն նրա հետ... Չէ՞ որ նրանք դրա համար ոչինչ չեն խնայել... Ռուսաստանի գերխնդիրն է՝ հայերի հետագա զարգացմանը նպաստել այնպես, որ նրանք դառնան օգտակար տարր ռուսական համաշխարհային քաղաքականության հարցում: ... Ռուսաստանի անվերապահ շահերն Առաջավոր Ասիայում ինքնին ակնհայտ են... ապահով ելքը դեպի Սև ծով, մենք արդեն համարում ենք մեր անվերադարձ հարստությունը: Մյուս կողմից, սակայն, եթե պատմական իրադարձությունները մեզ կրկին տանեն դեպի հարավային օվկիանոս, ապա նրան հասնելու ամենից կարճ ուղին բացվում է Հայաստանով... ահա մեր շահերին ամենից համապատասխանող երկիրը (ընդգծումը մերն է – Հ. Հ.) ... Ուստի, հայերի հետ ունեցած հարաբերություններից է կախված այդ մարզերը գրավելու արագությունն ու արդյունավետությունը: Եվ եթե ռուսական քաղաքականությունը հասնի այն բանին, որ յուրաքանչյուր հայ դառնա ռուսական տիրապետության և մշակույթի կամավորը, ապա նա փայլուն կերպով կլուծի իր խնդիրներն այդ տարածաշրջանում (ընդգծումը մերն է – Հ. Հ.)»[12]: Իսկ «Ռուսսկի վեստնիկ» ամսագրի հետևյալ գրառումը այսօր էլ նույն հնչեղությունն ու շեշտադրությունն ունի, չնայած մեկդարյա հեռավորությանը. «... մենք բավական հեռու ենք հայերի հանդեպ որևէ կանխակալ զգացումից հենց թեկուզ այն բանի համար, որ նրանք խելացի ձևով են վարում իրենց գործերը, և նրանց շրջանում կան շատ հայրենասերներ... Ժամանակը չէ՞, արդյոք, ինքներս մտածենք հայկական շահերը ռուսականի հետ ձուլելու և միացնելու մասին»[13]:

Արդ, անդրադառնանք մեր ժամանակներում հաճախակի դարձած այն հարցադրմանը, թե հայ-ռուսական հարաբերությունների զարգացման ընթացքում ով է ավելի շատ շահել կամ տուժել: Նույնիսկ հայ պատմաբանների ամբողջ սերունդներ են քննել այս հարցը. մի մասը գտնում էր, որ Ռուսաստանի հետ միացումը չարիք էր Հայաստանի համար, մյուսն էլ կարծում էր, որ այդ միացումը չարիքի փոքրագույնն էր, իսկ խորհրդային պատմաբանների համար այդ միացումը պատմական մեծ նշանակության իրադարձություն էր, փրկության միակ ելքը հայ ժողովրդի համար: Խորհրդային Միության փլուզումից շատ չանցած՝ մեզանում փորձ արվեց կրկին վերագնահատել հայ-ռուսական հարաբերությունները. եղան նաև ծայրահեղ տեսակետներ, երբեմն էլ՝ չափից ավելի ոգեշունչ մոտե-

---

[12] *Նույն տեղում, էջ 244:*

[13] *Նույն տեղում:*

ցումներ: Պատմաբանն իրավունք չունի ենթարկվելու քաղաքական շիկացած մթնոլորտի տարուբերումներին: Նա պարտավոր է ասելու ճշմարիտը, իսկ ճշմարտության միակ չափանիշը հայ-ռուսական հարաբերությունների իրական պատմությունն է և մեր ժամանակների խորհուրդը: Ի պատիվ հայ պատմաբանների, պետք է նշել, որ հրապարակ նետված քաղաքականամետ կարծիքներին նրանք տուրք չտվեցին: Միևնույն ժամանակ, նկատենք, որ յուրաքանչյուր արտահայտած մտքի իրական փորձաքարը ներկա ժամանակներն են, իսկ այդ ժամանակն արձանագրում է, որ չպետք է լոկ շահող կամ տուժող փնտրել այս հարաբերությունների մեջ. ի վերջո, շահել և շահում է ինչպես ներկայիս Ռուսաստանի Դաշնությունը՝ իր հարավային սահմանների և Մերձավոր Արևելքի նախադուռ հանդիսացող Հայաստանի նման վստահելի գործակից ու դաշնակից ունենալու իրողությամբ հանդերձ, շահել և շահում է նաև Հայաստանը՝ Ռուսաստանի նման հզոր դաշնակից ունենալու հանգամանքով՝ առաջին հերթին, մեր երկու անմիջական հարևանների հետ դեռևս բազում չլուծված հարցերի տեսանկյունից: Ավելին, ղարաբաղյան հակամարտության ներկայիս դեռևս չլուծված պայմաններում խնդիրը ձեռք է բերում քաղաքական կարևոր նշանակություն: Այնպես որ որքան կարևոր է հզոր Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանային փխրուն վիճակը կայունացնելու և մեր « հարևանների», մեղմ ասած, նկրտումները ի չիք դարձնելու համար, կարծում ենք, նույնքան էլ էական է Ռուսաստանի՝ Հայաստանի նկատմամբ մերձավորարևելյան և հարավկովկասյան քաղաքականության շրջանակներում իր ազդեցությունը պահպանելու և ամրապնդելու համար: Նշենք, որ հայության անվտանգության միակ երաշխիքը, անշուշտ, նրա տնտեսական և քաղաքական հզորությունն է, և միայն այդպես կարելի է դիմակայել տարածաշրջանային մարտահրավերներին, որոնք այդքան հաճախ են բախում մեր դուռը:

Ամփոփելով հայ-ռուսական հարաբերությունների պատմության այս համառոտ անդրադարձը՝ դժվար չէ նկատել, որ ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր հայ ժողովրդի առջև կրկին նույն հիմնախնդիրներն են: Իսկ անցյալի դասերը միշտ էլ ուսանելի են: Այսօր Հայաստանը և Ռուսաստանը ինքնիշխան պետություններ են: Սակայն դա ամենևին չի խանգարում շարունակելու և զարգացնելու պատմության խորքից եկող՝ երկու ժողովուրդների դաշնակցային հարաբերությունները: 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված հայ-ռուսական պայմանագիրը և դրան հաջորդած համաձայնագրերն ընդգրկում են հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր բնագավառները: Դրանք արձանագրում են երկու երկրների միջև հարաբերությունների նոր աստիճան և որակ, ինչը հիմք է տալիս հուսալու, որ դրանք հետագայում էլ կխորանան ու կունենան զարգացման նոր հեռանկարներ:

АРМЕНИЯ И РОССИЯ: УРОКИ ИСТОРИИ И РЕАЛИИ

ОГАНИСЯН А. Ж.

Резюме

Летопись армяно-российских военно-политических, экономических, культурных, духовных отношений имеет древние традиции и исчисляется не одним столетием. Дальнейшее развитие исторически сложившихся отношений привело к логическому исходу: в результате военно-политических событий в Закавказье первой трети XIX столетия Восточная Армения была присоединена к Российской империи. С тех пор Россия стала играть важную роль в исторических судьбах армянского народа; начался новый исторический этап в многогранных армяно-российских отношениях, и эта неоспоримая реальность уже история.

Естественно, уроки истории последних столетий указывают нам на необходимость переосмысления общности политических выгод и целей Армении и России. Сегодня Россия и Армения – суверенные государства. Но это обстоятельство нисколько не препятствует продолжению и углублению исторически сложившихся дружественных отношений двух народов. Сотрудничество армянского и русского народов ныне охватывает различные сферы политической и общественной жизни, характеризует новую ступень развития и дает основание надеяться на дальнейшее углубление добрососедских отношений между двумя дружественными государствами.

ARMENIA AND RUSSIA: THE LESSONS OF HISTORY AND REALITIES

H. HOVHANNISYAN

Abstract

The chronicle of the Armenian-Russian military-political, economic, cultural, spiritual relations dates back to ancient times and covers more than one century.

The further development of the historical relations led to a logical outcome. Because of the military-political events in Transcaucasus in the first quarter of the 19th century, Eastern Armenia was annexed to the Russian empire. Since then Russia has begun to play a significant role in the historical destiny of the

Armenian people, giving rise to a new stage in the multi-dimensional Armenian-Russian relations.

It goes without saying that the lessons taught by the history of previous centuries make it necessary to reconsider the political benefits and the objectives of Armenia and Russia. Currently, Russia and Armenia are two sovereign states. However, this does not hinder the further development of the historically –conditioned friendship between the Armenian and Russian peoples. The cooperation between these two nations encompasses various spheres of political and public life and marks a new level in the development friendly relations between the nations.